

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/4**

**13 մայիսի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի 05.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի պետի 28.03.2014 թ-ի թիվ 1424894 վարչական ակտի դեմ:

**Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի կողմից 28.03.2014 թ-ին կայացվել է թիվ 1424894 վարչական ակտը, որով որոշվել է Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն ենթարկել տուգանքի ապրանքի արժեքի 50 տոկոսի չափով, գումարով 700.000 ՀՀ դրամ: Վարչական ակտում տեղ գտած խախտման նկարագրության մեջ նշված է. «Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի կողմից ս/թ մարտի 19-ին Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում գտնվող պահեստային մասից օրենքով սահմանված կարգի խախտումով դուրս գրված ուղեկցող փաստաթղթերով առաքվել է սև մետաղի ջարդոն 40.000 կգ /1 կգ-ի արժեքը 35 դրամ/, ընդհանուր գումարով 1.400.000 դրամ»:

Վերը նշված վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման և վերացման հետևյալ պատճառաբանությամբ.

Ըստ գանգատի, 19.03.2014 թ-ին պահեստային մասից «Կամագ» մակնիշի 4 մեքենաներով տեղափոխվել է ընդհանուր 32.200 կգ սև մետաղի ջարդոն, իսկ օրենքով սահմանված հաշիվ ապրանքագրերը գտնվել են վարորդների մոտ: ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ աշխատակիցները ՄԵժամորի վարչական տարածքում մեքենաները կանգնեցրել են և առանց վարորդների մոտ առկա ուղեկցող ողջ փաստաթղթերը պատշաճ զննելու, գտել են, որ դրանք բացակայում են, «աչքաչափով» կշռել են բեռը, որն իբրև կազմել է 40.000 կգ, որից հետո մեքենաները ՕՀՎ աշխատակիցների թույլտվությամբ ուղևորվել են ք.Մասիս: Դրանից հետո ՕՀՎ աշխատակիցներն արձանագրություն են կազմել ապրանքների վրա արգելանք դնելու մասին և իբրև ի պահ են հանձնել Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանին, այն դեպքում, որ վերջինս այդ գործողություններին մասնակից չի եղել, իսկ ապրանքներն արդեն տեղափոխված են եղել գնորդի մոտ: Ապրանքների վրա արգելանք դնելու մասին որոշումը Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը ստացել է փոստով՝ 26.03.2014 թ-ին:

Վարչական վարույթի ընթացքում ՕՀՎ աշխատակիցների պահանջով Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը ներկայացրել է վարորդների մոտ եղած և պատշաճ ձևով լրացված հաշիվ ապրանքագրերը և հայտնել, որ ապրանքներն անփաստաթուղթ չեն եղել: Միաժամանակ գրավոր հայտնել է, որ արգելանքի վերցված ապրանքն իր պահպանությանը չի հանձնվել: Օբյեկտիվ իրականությունը պարզելու համար ՕՀՎ աշխատակիցները նույնիսկ բացատրություններ չեն վերցրել ինձանից և վարորդներից: Վարույթի ընթացքում Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը ներկայացել է լուսմների, սակայն լուսմների ժամանակ ՕՀՎ աշխատակիցները իրեն հնարավորություն չեն տվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Նման պայմաններում ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի 28.03.2014 թ-ին կամայականորեն կայացվել է թիվ 1424894 վարչական ակտը, որով որոշվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի համաձայն ենթարկել տուգանքի՝ գումարով 700.000 դրամ:

Վարչական ակտը կայացնելու օրը Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը գրավոր դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի պետին՝ խնդրելով հնարավորություն տալ ծանոթանալ վարչական վարույթի նյութերին և դրանցից կատարել պատճենահանումներ, սակայն իրեն նման հնարավորություն չի ընձեռնվել:

Ըս գանգատի, թիվ 1424894 վարչական ակտը կայացվել է օրենքի խախտմամբ, կեղծ տեղեկությունների հիման վրա, հետևաբար այն ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը խնդրում է.

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի 28.03.2014 թ-ի թիվ 1424894 վարչական ակտը ճանաչել անվավեր:

2. Մինչև համապատասխան որոշում կայացնելը տուգանքի գումարի վճարումը կասեցնել:

3. Թույլատրել ծանոթանալ վարչական վարույթի նյութերին և պատճենահանել դրանք:

### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի աշխատակիցների կողմից 19.03.2014 թ-ին կազմվել է թիվ 1424894 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

Ս.թ. մարտի 19-ին Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղում գտնվող պահեստային մասից օրենքով սահմանված կարգի խախտումով դուրս գրված ուղեկցող փաստաթղթերով «Կամազ» մակնիշի 161 LS 67 պետհամարանիշի (վարորդ Արշակ Բավեյան), «Կամազ» մակնիշի 687 ՕՕ 63 պետհամարանիշի (վարորդ Յուրիկ Բաղեյան), «Կամազ» մակնիշի 834 ՕՏ 64 պետհամարանիշի (վարորդ Նելսոն Ստեփանյան) և «Կամազ» մակնիշի 10 SU 490 պետհամարանիշի (վարորդ Լևոն Իվանյան) մեքենաներով տեղափոխում էր սև մետաղի ջարդոն ընդհանուր քաշով 40.000 կգ., 1 կգ-ի արժեքը 35 դրամ, ընդհանուր գումարով 1.400.000 դրամ:

Քննարկման ընթացքում հաստատվեց այն փաստը, որ 19.03.2014 թ-ին վերոգրյալ ավտոմեքենաներով տեղափոխվել է Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի կողմից մատակարարված սև մետաղի ջարդոնը, որի գնորդը հանդիսացել է «Մետէքսիմ» ՍՊԸ-ն, ինչը հաստատվում է գանգատին կից ներկայացված հաշիվ ապրանքագրերով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի աշխատակիցները պնդեցին, որ 19.03.2014 թ-ին, երբ իրենց կողմից կանգնեցվել են վերոգրյալ մեքենաները, վարորդների մոտ առկա և իրենց ներկայացված հաշիվ ֆակտուրաներում մատակարարվող ապրանքի վերաբերյալ տվյալներից նշված է միայն մատակարարվող ապրանքի անվանումը: Հաշիվ ֆակտուրաներում տեղափոխվող ապրանքի չափման միավորը, քանակը, գինը և գումարը սյունակները, եղել են չրացված (նշված հաշիվ ֆակտուրաները առկա են գործում): Ինչ վերաբերվում է գանգատին կից ներկայացված հաշիվ ապրանքագրերին (որոնք կազմված են սահմանված կարգով), ապա մեքենաները ՕՀՎ աշխատակիցների կողմից կանգնեցվելու պահին դրանք վարորդների մոտ առկա չեն եղել և առկա լինելու դեպքում դրանք նույնպես կներկայացվեին:

ՕՀՎ աշխատակիցները նշեցին նաև, որ Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանը չունի համապատասխան պայմաններ կշռելու մատակարարվող սև մետաղի ջարդոնը: Այդ իսկ պատճառով մատակարարվող ապրանքների ուղեկցող փաստաթղթերում (հաշիվ ապրանքագրերում) համապատասխան սյունակները լրացվում են միայն գնորդ կազմակերպությունում ապրանքը կշռվելուց հետո:

Հանձնաժողովի անդամների Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանին ուղղված հարցին, թե ինչով է պայմանավորված նման գործելաձևը, հնչեց պատասխան, որ չրացված հաշիվ ապրանքագրերը կազմվում են ճանապարհային ոստիկանության աշխատակիցներին ներկայացվելու համար:

Հանձնաժողովի համոզմամբ վերոգրյալ փաստական հանգամանքներն ապացուցում են Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի դրույթների

խախտման հանգամանքը: Ինչ վերաբերվում է կիրառված տուգանքի չափին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում այն չի կարող հիմնավոր համարվել, քանի որ առկա չեն հիմնավոր ապացույցներ այն մասին, որ տեղափոխվող սև մետաղի ջարդոնի ընդհանուր քաշը կազմել է 40.000 կգ.: Տվյալ դեպքում տուգանքի հաշվարկման ժամանակ տեղափոխված սև մետաղի ջարդոնի ընդհանուր քաշը անհրաժեշտ է ընդունել 32.200 կգ., քանի որ այն համապատասխանում է գանգատին կից ներկայացված հաշիվ ապրանքագրերում (երկկողմանի հաստատված) նշված տվյալներին, ինչպես նաև ընդունվում է Ա/Ձ Հրաչյա Պետրոսյանի կողմից: Այսինքն, 7800 կգ-ին բաժին ընկնող տուգանքի մասը ենթակա է նվազեցման:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 21-րդ բաժնի պետի 28.03.2014 թ-ի թիվ 1424894 վարչական ակտով առաջադրված տուգանքը նվազեցնել 136.500 դրամով:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ